ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ՓԵՏՐՎԱՐԻ 2022 թվականի N 71-Ա

ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ մասով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 39-րդ, 60-րդ հոդվածներով, 64-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով, հիմք ընդունելով Լևոն Սամվելի Խաչատրյանի լիազորած անձ Կարինե Սամվելի Խաչատրյանի դիմումը, լիազորագիրը, անձնագրի պատճենը, «ԱԿԱ-ԳՐԱՆԻՏ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը, Աքորի գյուղի տնտեսական գրքից քաղվածքն ու 17.02.2022թ. թիվ 207 տեղեկանքը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ***՝

1. Վերականգնել Լևոն Սամվելի Խաչատրյանին (ծնված՝ 09.01.1966թ.) պատկանող, 0.13 հա մակերեսով, 06-022-0052-0028 ծածկագրից բնակավայրերի բնակելի կառուցապատման նշանակության հողամասի նկատմամբ հողհատկացման հիմքերը, սեփականության իրավունքը:
2. Լևոն Սամվելի Խաչատրյանին պատկանող, Լոռու մարզի Աքորի գյուղում գտնվող, 0.13 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման նշանակության հողամասին տրամադրել համայնք Ալավերդի, գյուղ Աքորի, 5-րդ փողոց, 3-րդ նրբանցք, 16/1 հողամաս փոստային հասցե:
3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:
4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2022թ. փետրվարի 23
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ՓԵՏՐՎԱՐԻ 2022 թվականի N 72-Ա

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 11.02.2022Թ. N 51-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

Ալավերդի համայնքի ղեկավարի 11.02.2022թ. «Ալավերդի համայնքի ղեկավարի 19.01.2022թ. N 17-Ա որոշման մեջ լրացում կատարելու մասին» N 51-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն. որոշման մեջ «2022FQ24ZQ»-ի փոխարեն կարդալ «2022R967ZN»:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ

2022թ. փետրվարի 23

ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՓԵՏՐՎԱՐԻ 2022 թվականի N 73-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով, հիմք ընդունելով քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ***՝

Ալավերդի համայնքի Սանահին Սարահարթ թաղամասի Օսիպյան փողոցի արևելյան մասում գտնվող, 06-002-0674-0001 ծածկագիրց առանձնացված, 0.000225 հա մակերեսով բնակավայրերի ընդհանուր օգտագործման հողամասին տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին Սարահարթ թաղամաս, Օսիպյան փողոց, 7 հողամաս փոստային հասցե:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2022թ. փետրվարի 24
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՓԵՏՐՎԱՐԻ 2022 թվականի N 74-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով, հիմք ընդունելով Արթուր Գառնիկի Ձավարյանի դիմումը, անձնագրի պատճենը, սեփականության իրավունքի N 2284981 վկայականը, «Թիվ 1 ԲՇՏ» ՓԲԸ տնօրենի կողմից 24.02.2022թ. տրված տեղեկանքը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ***՝

Արթուր Գառնիկի Ձավարյանին սեփականության իրավունքով պատկանող Ալավերդի քաղաքի Սանահին կայարան 31 հասցեում գտնվող բնակելի տանը, վերահասցեավորման նպատակով, տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին կայարան թաղամաս, 31/1 բնակելի տուն փոստային հասցե:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ

2022թ. փետրվարի 24
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՓԵՏՐՎԱՐԻ 2022 թվականի N 75-Ա

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԼԱՆ-ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ, ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ, ՏԱՐԱԾՔԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ԵՎ ԲԱՑԱՏՐԱԳԻՐԸ, ՂԵԿԱՎԱՐ ԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ, ԿԱՊԻ ԵՎ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՍԽԵՄԱՆ, ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԸ, ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՊԱՀՈՎՄԱՆ, ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՏՍՊԱՐՄԱՆ, ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՇՎԱՐԿԸ, ՈՒԺԵՐԻ ԵՎ ԿԱՊԻ, ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 10.04.2003թ. N 384-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 24.01.2022թ. թիվ 49-Ա որոշման պահանջները ***որոշում եմ***՝

1. Հաստատել՝
   1) Քաղաքացիական պաշտպանության պլան-ժամանակացույցը.
   2) Հիմնական ցուցանիշները՝ համաձայն N 1 հավելվածի.
   3) Հնարավոր իրավիճակի պլանը և բացատրագրերը՝ համաձայն N 2 հավելվածի.
   4) Կառավարման, կապի և ազդարարման սխեման՝ համաձայն N 4 հավելվածի.
   5) Քաղաքացիական պաշտպանության և հետախուզության բացատրագիրը՝ համաձայն N 6 հավելվածի.
   6) Բնակչության անհատական պաշտպանության միջոցներով ապահովման հաշվարկը՝ համաձայն N 7 հավելվածի.
   7) Բնակչության պատսպարման հաշվարկը՝ համաձայն N 8 հավելվածի.
   8) Բնակչության տարահանման հաշվարկը՝ համաձայն N 9 հավելվածի.

9) Ուժերի և միջոցների հաշվարկը՝ համաձայն N 10 հավելվածի.

10) Կապի միջոցների հաշվարկը՝ համաձայն N 11 հավելվածի.

11) Ինժեներական ապահովման հաշվարկը՝ համաձայն N 12 հավելվածի.

2. Սույն որոշման 1-ին կետով հավելվածները հաստատվում են երեք տարի ժամկետով:
3. Որոշման կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:
4. Որոշումը հայտարարել ըստ առնչության:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2022թ. փետրվարի 25
ք. Ալավերդի